

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱՂԱՐԵՑՄԱՆ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ապահովագրության Պայմանագիրը դադարում է`
 - 1.1. ապահովագրության Պայմանագրի գործողության ժամկետի ավարտվելու դեպքում (ապահովագրության Պայմանագրում կամ անհատական քարտում նշված ապահովագրության ավարտի ամսաթվի ժամը 24.00-ին),
 - 1.2. Ապահովագրողի` ապահովագրության Պայմանագրով սահմանված պարտականությունների ամբողջ ծավալով կատարման դեպքում,
 - 1.3. սույն Պայմանագրով, Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
2. Ապահովագրության Պայմանագիրը վաղաժամկետ լուծվում է`
 - 2.1. կողմերից մեկի գրավոր դիմումի հիման վրա,
 - 2.1.1. եթե նախատեսված ճանապարհորդությունը չի կայանում: Պայմանների սույն կետի իրագործման համար պարտադիր է, որ Ապահովադիրը.
 - այդ մասին տեղեկացնի Ապահովագրողին Պայմանագրի գործողությունը սկսելուց առնվազն մեկ աշխատանքային օր առաջ,
 - Ապահովագրողին հետ վերադարձնի Պայմանագրի բնօրինակները,
 - Ապահովագրողին ներկայացնի արտերկիր չմեկնելու հիմքերը:
 - 2.1.2. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
 - 2.2. կողմերից մեկի նախաձեռնությամբ` մյուս կողմի` Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով` ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Պայմանագիրը կողմերից մեկի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու դեպքում Ապահովագրավճարի վերադարձն իրականացվում է հետևյալ կերպ`
 - ա) եթե Ապահովադիրը հրաժարվում է Պայմանագրից գործողությունը սկսվելու օրվանից առաջ, ապա Ապահովագրողը վերադարձնում է Ապահովադիրին վճարված ապահովագրավճարը` մասհանելով 1 000 (մեկ հազար) ՀՀ դրամի գործավարման ծախսեր,
 - բ) Եթե Ապահովադիրը հրաժարվում է Պայմանագրից` վերջինիս գործողությունը սկսվելու (Ապահովագրողի համար հատուցման պարտավորության համար անհրաժեշտ պայմանների առաջացման, ճանապարհորդության սկսվելու) օրվանից հետո` ապահովագրավճարի վերադարձ տեղի չի ունենում:
4. Ապահովագրության Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում ապահովագրավճարի վերադարձն իրականացվում է գրավոր ծանուցագիրն ստանալու պահից 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում:
5. Ապահովագրության Պայմանագիրն Ապահովադրի պահանջով վաղաժամկետ լուծելու դեպքում, երբ Ապահովադրի պահանջը պայմանավորված է Ապահովագրողի կողմից ապահովագրության Պայմանագրի պայմանների խախտմամբ, ապա վերջինս Ապահովադրին է վերադարձնում իր վճարած ապահովագրավճարն ամբողջությամբ: